

«աղած տաճկահոյ բարբառով Աստուածածունը՝ թիւր բացատրութիւնք, առնհարազատ թարգմանութիւն եւայ-  
լըն ասելով»:

Կուզելինք իմանալ՝ թէ Ռուսաց Արևին-  
հոդոսը արգեօք, ոչ թէ իրաւունք ու-  
նենալ, այլ եւ մոքէն անգամ անցու-  
ցած է տաճկահոյ բարբառով տպուած  
Աստուածաշնչին թարգմանութեան  
թերութիւնը կամ անհարազատութիւ-  
նը քննել թող թէ «Մշակին», պէս  
իւր չգիտցած խնդրոյն խառնուելով՝  
վճիռ տալ ընդհանրապէս Աստուածա-  
շնչին Հայերէն թարգմանութեանց  
վերայ:

Վերջացնենք մեր խօսքը՝ խոստանա-  
լով անպատճառ կատարել «Մշակի»,  
կամ նորա աշխատակցին վերջին խրն-  
դիրը, այս ինքն ցուցանել փաստերով  
թէ այն նոր թարգմանութիւնքը որոց  
ինքը պաշտպան հանդիսանալ կուզե՝  
յիրաւի անհարազառ են և չեն սեռանօտ,  
«որ ժողովրդեան կառիւծները խարստին»,  
վասն զի այս իսկ է նաեւ մեր նպատա-  
կը, փարատել մեր ժողովրդեան մոքէն  
այն կասկածները՝ որ «Մշակին», այս-  
պիսի յօդուածները կծնանին ժողո-  
վրդեան մէջ, եւ բազմաց մոլորութեան  
պատճառ կլինին:

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ԱՐՃԱԿԱՒԱՆ ՅԱՐՃԱՐՈՒԽԻԱ-

(Ն-րան. և Ք-րէ)

ԱՐՃԱԿԱՒԱՆԱՅ ՏԵՂԻՆ.

Երշակաւանայ տեղին՝ զոր Կորենացին  
կդնէ «ի թիկանց կուսէ Մասեաց լերին»,  
եթէ Ճիշդ առնունք, աւելի Մասեացոտն  
գաւառի մէջ կանկանի՝ քան թէ ի Կոգու-  
միտ. վասն զի եթէ Մասեացոտն գաւառը  
կհամարուի Երարատ լերին Հիւսիսային  
ստորոտքը յարեւելից յարեւմուտք, այն  
քարակառուր երկարաձիգ առապարը, որոց  
քարակարկառի մէջ կնշմարուին տեղիքն  
Փառախոտոյ յարեւմտից Տաշըուռուն ա-  
սացեալ գեղջ, և Զոյակերտ ի Պարազօ-  
եռւն գեղջ տաճկաց նոյնպէս յարեւմտից  
մինչև յԵրհաճ զիւղ. որոյ կործանուած  
և սե ապառաժ անհեղեղ բերդաքարերի  
վրա կնշմարուին և այժմ բենեաձև զրեր  
ի նախնեաց, ըստ այսմ Երշակաւան ևս  
անկանելով Մասեաց լերին հարաւակող-  
մը անմիջապէս նորա թիկանց վրա բարձ-  
րաւանդակ ձորամիջին, որոյ արեւմտա-  
կողմն հիւսիսից հարաւ կպատէ լեառն  
Գինայ, Օրկովի ասացեալ սարը. նորա  
այս զրիցը կերևի Երշակաւան Մասեա-  
ցոտն գաւառի մէջ:

Իսայց Կորենացին բնչպէս Երշակա-  
ւանայ, նոյնպէս և Կոգովիտ գաւառի  
համար որ զրել է զթիկամբք Մասեաց,  
յետակայ պատմիչք համարել են թէ և  
Երշակաւանն է Կոգովիտ գաւառի մէջ.  
ըստ որում նորա համար ևս զրած է «ի

թիկանց կուսէ լերին Մասեաց շինեաց ձեռակերտ, . . . այս տեղեց առնվով և չին չայաստանը զԱրշակաւան դրել է Առգովիտ գաւառի մէջ, ինչպէս և չ. Ալշանի աշխարհացոյց թիրթի մէջ:

Եյլ միթէ և չորս կողմից եղած թիւ կունքն Մասեաց պիտի համարութին Առգովիտ գաւառ. այժմեան դրիցն այս է իսկապէս յայտնի, որ Առգովիտ գաւառը Մասեաց լերին հարաւակողմն է Տաճկաց սահմանին մէջ, ուր է և Պայազիտ քաշտք. իսկ Երշակաւան կից ի թիկունս Մասեաց՝ երկուց լերանց ձորամիջին, աւելի հիւսիսային բաժնումն եղած դաւառի վրա կանկանի. ուր է լեռնահովիտն Մասեաց և Գինայ լերանց կցուրդի մէջ, բարձրաւանդակ տափարակ դիրքով ի ձորամիջին:

Իսյց մենք պատմագրաց այս համազմունքը չենք մերժեր, որոնք թէ և Երշակաւանայ տեղւոյն ոչ են ականատեսվք, բայց Խորինացու միանման գրուածքէն կհետեւ ցնեն. միայն կտեղագրեմք զԵրշակաւան ըստ այժմեան դրից տեղւոյն և ձեին:

Երհած ասացեալ գիւղէն դէպ ի երկուց լերանց ձորամիջն ի վեր, որ կհամարուի Յոլակերտի մի մասն իւր հին բերդովն ու դիրքով, որ է “ Առ խորշեւք լեռնոտինն, ուր մեծապէս ծախուք, , , տուն կշինէ Ամասիա Յոլակայ համար, մինչև Երշակաւան երեք ժամին աւելի է զառ ի վեր ճանապարհն առափար ձորամիջէն, ընդ որ ուղղակի դէպ ի հարաբարձրանալով, աւելի ևս անմերձենալի է ձորի արեելակողմանքը իւր ապառաժ քարակարկառ դիրքովք. այս խորածորէն ևս բարձրանալով, ուր երկու կողմնական

իրանց թիկունքը գրեթէ կհաղին իրար, քարքարուտ ձօրի գլուխը հասածին պէս, կրացուի ընդարձակ և բոլորակ լեռնահովիտը, և երկու լերինք իրարից այնքան կհեռանան այս լեռնադաշտի վրա, մինչեւ գրեթէ ընդարձակ հովիտը կտարածուի բոլորակ ձեռով հինգ վերստ աւելի շըրջապատ մեծութեամբ. և այս հովիտը արսէն ընդարձակելով տափարակդաշտի երեսը յարեւամից և ի հարաւայ նորա, ըետան Գինայ ծոցաւոր և կիսարողորակ ձեւ կառնու, բոլորովին սիզաւէտ. և այս բարձրաւանդակ տափարակ դիրքի մէջ՝ Երշակաւանայ ընդարձակ հովիտը կը պատէ. հարաւային կողմից իւր թեւք կիսարողորակ տարածելով լեռն Օրկովի, դէպ ի արեելք, վերսախն կմերձենայ Մասեաց լերին: Եյլ ընդարձակ լեռնահովտի մէջն է Երշակաւան, արեելեան կողմից՝ Մասիսի արեւմտեան թեւի տակ. տափարակ դիրքով, ինչպէս ասացինք, և ըստ արեելեան աղբաց սովորութեան եռանկիւնի ձեռով:

Եւանը այս դիրքի վրա, և այս ձեւն  իւր շրջապատը գրեթէ Յ վերստ կլինի. պարսպի քարաշարը կէս մի հողի երեսին, երեք կողմից ևս կերեւի. տեղադրութեանց քարաշարեր կը նշմարուին պարսպի ներսը քաղաքի արեելեան անկիւնում, բոլորովին ևս ապառաժ որձաքարերէ, պարտաւոր և անպարտ մարդկան արեամբը ներկուած և գոզցես սեացած մինչեւ ցայսօր: Եհարկու և սրտառուչ տեսարան. զի մարդիկի չպահանջնով զԵրշակաւան երկրիս երեսի վրա, լերինք գթարով մարդկային անզ գթութեան վրա, երկու կողմից ծոցա-

ւորուած Արշակուանայ դիբքն ու ձեւը կապահին սիզաւէտ և ծաղկաբոյր հովիտների և ծործորների մէջ, թերեւս ի յիշատակ մարդկային անդժութեան:

Պարսպի հարաւէն մինչեւ ի հիւսիս, և մինչ ի գլուխ ձորոյն, որ ճանապարհն է ելից ինչպէս ասացինք, բաւական լայնութեամբ և խորութեամբ երկարացած է առուն, որ կերեւի Մասիսի հարաւային բարձրաւանդակէն ոկլզնաւորուած, ուր կվկայեն վրանաբնակ Քուրդք, թէ կայ մեծ ջրամբար կամ լիճ ջրոյ, ուստի կը բերեն եղել ձեան հալացած ջուրը ի քաղաք: — Այս դիբքով, և այս ստորագրած հովտի մէջ, աւելի մերձ է Արշակուան Մասեաց լերին՝ քան լերին Գիշնայ:

Մեր առաջնորդ Քուրդը կպատմէր թէ Արշակուանայ արեւելեան հարաւակողմը պարսպին մօա՝ կան կրաշէն հորեր, որոց մէջ կժողովին անձրեւածուր յարրումն խաշնարած հովուաց գարնան ժամանակ: Եւ այս իսկ է պատճառը՝ որ քաղաքամիջն և ընդարձակ հովտի երեսը ծածկած մարդաչափ խոտը դալար ու չորացած խոտը, ուր ջուր չէին լով յարրումն խաշնաց, ամենեին ոչխարաց հօաք չի մերձենալ այս խոտաւէտ տեղերին, ճանապարհն միայն է, ընդ որ մէք ելանք, որ կտոնի ի Կողովիտ գաւառ ի սահման Տաճկաց. և վրանաբնակ և աւազակ Քուրդը միայն կճանապարհորդեն ընդայն ի Պայտիատ, ջուր առնլով եօթն ժամուց ճանապարհի համար Որուսաց սահմանազլենին յԱրհաճ գիւղէն, ինչպէս և մէք սափորով ջուր առաք ընդմեզ:

ԱԲԵԼ ԱՐՔԵՊՈԽՈՎՈՂՈՅ

ՃԱՆԱՊԱՐՀՈՒԹՈՒԹԻՒՆ

### ՅԵԳԻՊՏՈՍ.

(Ն-Ե-Ր-Ա-Հ-Ա-Բ-Ի-Ն-)

Ե.

Եկեղեցիք և Առաջնորդարանք Ազգիս աստ ի Գաւհիրէ Եգիպտոսի թէ հինք և թէ նորք, և ընդհանրապէս այլ ամենայն յիշատականք բարեպաշտութեան Քրիստոնէութեանս մերոյ պարծանք յաւիտենից ի մէջ ազգաց և ազանց՝ այսորիկ և այսպիսիք ին ի ներկայ դրութեան:

Եախին Առաջնորդարանն՝ բաց յերկուց սենեկաց որ ի վերնայարկի սուրբ Արդիս եկեղեցւոյն՝ կառուցեալ է յարելից այնորիկ յԱրծագուէն ասացեալ թաղին, և քառակուսի և քարաշէն շնուրած կրկնայարկ ի ներքոյ ունելով ըզքարագործ սառնիճ ջրոյ՝ կամ ջրամբար:

Ալայատակ սրահ նորա և գուռն է յարեւելից. իսկ յարեւմտից յեցեալ է յարեւելեան որմն եկեղեցւոյն. ի ներքնայարկին են երկու կողմնական սենեեակք ի պէտամիաբանից, որպէս և վերնայարկքն վասն Առաջնորդի: Այժմ այս շնուրթիւն կիսաւեր և խարխալեալ է իսպառ. զորս աղքատին անուորք վարձեալ են ի մերոց:

Առաջնորդարանս այս՝ որ և հոգետուն՝ ունի զարձանագիր շնուրթեան սառնձին ի սրահի անդ ի ծակատ զրանն այնորիկ օրինակ զայս:

“Ե Աստուած որ պատրաստեաց զայս սառնիճս ի պատրիարքութեան սրբոյ քաղաքին Երուսաղեմոյ՝ Եւդոկիացի Պետրոսի . . . շնեցաւ անուամբ Տիրամայր սուրբ Աստուածածնայ առ ի ողորմութիւն և աղքատին մեր ։ այոց.”